[illegible] 4 ՆՈՅԵՄԲԵՐ ԹԻՒ 855

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիո համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 "
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 "
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 "

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

Կառնեայի համար ձեռքէ 10 սանթիմ է

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

[illegible] եւ դրամ [illegible]

Редакция на вѣстникъ "Шаржумъ", Варна

Redaction du journa[l] „Charjoum" Varna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

### «ՅԱՌ ՅԵՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բը բրոշիւրը յանձնված է տպագրութեան.

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող դոկումանները մեծ տեղ պիտի գրաւեն.

Բրոշիւրի գինը տպագրութենից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

---

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժոզէֆ քարափին վրայ. կը ստանայ զանազան հայերէն թերթեր. Ու հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները.

---

### ՄԵՐ ՉԸ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Խմբագրութիւնս պատուիրեալ նամակներով յիշեցուցած է տասնեակ բաժանորդներու տարիներով ունեցած պարտքերնին և խնդրած է որ փութան մաքրել իրենց հաշիւը. Սակայն շատերէն պատասխանը չստացանք. Պէտք է գիտնալ որ տարիներով թերթի պարտք ունենալը ամօթ է և մենք երբեք տրամադիր չենք ձրի թերթ ուղարկել բաժանորդներուն.

## ԱՒԵԼԻ ԼԱՒ Է ՈՒՇ, ՔԱՆ ԵՐԲԵՔ

Փարիզ հասնելէս ի վեր սրտի գոհունակութեամբ կարդացի քանի մը թերթերու մէջ՝ թէ՛ անհատներու և թէ խմբագիրներու կողմանէ հրապարակաւ գրուած և թէ՛ առանձին ինձ հասած բազմաթիւ նամակներ,— որոնցմով կուսակցութեանց մէջ միութիւն կամ համերաշխութիւն յառաջացնելու համար՝ ազնիւ ընկերներ և բարեկամներ ինծի թելադրութիւններ կընեն և ցանկութիւններով յոյսեր կը տածեն իմ վըրայ՝ այդ մասին.

Որքան ալ թէ շատ կանուխէն պարտականութիւն զգացի, անմիջապէս իւրաքանչիւրին առանձին առանձին պատասխանելով՝ արձագանք և գոհացում տալ իրենց փափագանաց, և սակայն յիշելով անցեալին մէջ եղած հապճեպ միութեանց անօգտակարութիւնը, ես ինծի թոյլ տուի քիչ մը եւս համբերելու և սպասելու, ըսելով, «աւելի լաւ է ուշ քան երբեք»։

Ընդունուած իրողութիւն և ճշմարտութիւն մըն է, որ քաղաքական կուսակցութիւնները ազգի մը կամ ժողովրդի մը յառաջդիմութեան ազդակներն են եղած. բայց տխուր իրականութիւնն այն է, որ այժմ մեր մէջ՝ կուսակցական անուան տակ եղած պայքարը աւելի եսական, թշնամական եղած է, քան թէ գաղափարական և. դժբաղդաբար, կուսակցականները, քիչ բացառութեամբ, կուսակցամոլներ դառնալով՝ գործը հետզհետէ ծայրահեղութեան և դատապարտելի եղբայրասպանութեան աստիճանին հասցուցած են։

Չեմ կարող հաւատալ, թէ ըլլայ մէկը, որ բռնակալի լծի ծանրութիւնը քիչ թէ շատ զգացած լինի ու միութեան կամ համերաշխութեան օգուտը ժխտէ։

Չըսեմ ամէնը, այլ շատերը կըսպասեն այս կենսական հարցին յաջող ելք մը տրուելուն, սակայն պէտք է գիտնալ, որ գործը այն ժամանակ դիւրացած և համարեայ թէ վերջացած կը լինի, երբ իւրաքանչիւրս իր կարգին կաշխատի, գործնական նախնական քայլերը առնել.— այսինքն՝ ամէն մէկը իր պատկանած կուսակցութեանը, գտնուած շրջանակին կամ միջավայրին մէջ՝ կը ջանայ մարել արդէն արծարծուած թշնամական, վրէժխնդրական ու եսական կիրքերը, վերջ տալով քինախնդրութեան ու բամբասանքին.

Ամէնքս ալ անյիշաչար լինելով՝ պէտք է աշխատինք անբիծ ու մաքուր սրտով մօտենալ իրարու և եղբայրական ձեռք երկնցունել փոխադարձ.

Իսկ վերջնոյն քայլը, պաշտօնական ձեւակերպութիւնները կը մնայ կուսակցութեանց վարիչ մարմիններուն, որոնք՝ կարծեմ այլեւս զգացած ու համոզուած պէտք է լինին, թէ ժամանակը չէ յանցանքը մէկը միւսին վրայ ձգելու և հին հաշիւներ մաքրելու. այլ անհրաժեշտ է ժողովրդի ձայնը և անոր արդարացի պահանջները լսելու, քանի որ հասած ենք այնպիսի ժամանակի մը՝ որ խիստ վճռական է։ Մենք պէտք է որ մեր թշնամիներուն դիմագրաւելու և Գործի պահանջին բաւարարութիւն տալու չափ ոյժ և միջոցներ ունենանք։

Մէկ տեղ ցարիզմը իր սուր ճանկերը խրած է մեր սրտին մէջ և մեր վրայ է արձակած իւր սև հարիւրակները, կոզակները և անգիտակից թաթարները. Միւս տեղ հայ արեան ծարաւի Սուլթանն է, որ անպատիժ կը ծածանեցնէ իր հայաջինջ դրօշը մեր վրայ՝ բաց թողնելով իր զօրքերը, բաշիբոզուքները, համիտիէները, քիւրդերը, չէրքէզները և բոլոր խաւարային ոյժերը...

Արդ քիչ թէ շատ իւր մէջ յեղափոխական զգացում կրող մարդը, աչքի առաջ ունենալով հայրենիքի այս սրտաճմլիկ ու աղեխարշ վիճակը և մօտէն գիտակից ու ցաւակից լինելով անոր անտանելի վշտերուն, չէ կարող անտարբեր մնալ, մանաւանդ այսպիսի ժամանակ մը, երբ ոչ ոք գիտէ թէ վաղը քաղաքական կացութիւնը ինչ խառնափնթոր վիճակ կըստանայ և ինչ անսպասելի պատահարներ ու պատեհութիւններ կը ծագին ու կրնան ծագիլ, որոնցմէ պէտք է գիտնանք օգտուիլ. Եւ երբ մահամերձ բռնաւորին օրինական ու ապօրինի ժառանգորդներն ու անոնց պաշտպան կողմնակիցներն իսկ արդէն սկսած են իրենց գլխի ճարը նայիլ և միջոցներ խորհիլ, որպէսզի վաղը ոտքի տակ չերթան, հապա՝ մե՞նք որչափ աւելի պէտք ունինք խորհելու և արթուն գտնուելու, մե՞նք, որ թէ՛ աշխարհագրական դիրքերով, թէ զիրար հալածող կազմակերպութիւններով ու ուղղութիւններով և թէ նիւթական ու բարոյական տկար ոյժերով բաժանուած ու ցրուած կը գտնուինք, անհաւասար ոյժերու դէմ.

Վաղուայ ծագելիք խառնաշփոթութեանց մէջ մեր գոյութեան սպառնացող աղէտ վտանգը, որ կարող է լինել աւելի վատ քան զառաջինը, և որոյ մասին միածելն իսկ մարդուս սոսկում կազդէ, աչքի առաջ ունենալով, պարտք կզգամ դիմում ընել հայ ժողովրդեան, միահամուռ Յեղափոխական Գործին փարելու և խնդրել կուսակցութեանց վարիչ մարմիններէն, որպէսզի մեր ցրուած ոյժերը ընդհանուր թշնամւոյն դէմ համերաշխելու կամ միացնելու գաղափարին զարկ տան և աշխատին իրականացնել այդ.

Եւ որպէսզի այդ ցանկալի գաղափարը օր առաջ մարմին ստանայ, կրկին ու կրկին կը խնդրեմ, որ հայ յեղափոխական կուսակցութեանց վարիչ մարմին-

